

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ/HAIGAZIAN UNIVERSITY  
Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն  
Armenian Diaspora Research Center  
Հայկական Սփիւռք Ա./ARMENIAN DIASPORA I

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ  
ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ  
ԱՐԴԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԸ

Գիտաժողովի Նիւթեր  
(15-17 Մայիս 2013)

Խմբագրեց  
Անդրանիկ Տազէսեան

Haigazian University Press  
Պէյրութ 2014

**ՀՀ ՍՓԻԻՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ  
ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ**  
ՎԱՂԻՆԱԿ ՎԱՐԴԱՆԵԱՆ  
vardanyan.vaghinak@mail.ru

**ՄՈՒՏՔ**

Ձեկուցմանս մէջ համառօտ կը ներկայացնեմ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան ստեղծումը, նրա նպատակներն ու խնդիրները, իրականացրած ծրագրերը, գերակայ ուղղութիւնները ու զարգացման հեռանկարները:

**ՀՀ ՍՓԻԻՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը ստեղծուեց 2008ի Հոկտեմբերի 1ին: Նրա գործունէութեան հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետութեան եւ Հայկական Սփիւռքի գործակցութեան զարգացման, կապերի ամրապնդման, հայ ժողովրդի հոգեւոր միասնութեան, հայ կրթական, գիտական, մշակութային, տնտեսական, երիտասարդական, մարզական կեանքի զարգացմանը նպաստող քաղաքականութեան մշակման իրականացումը, դրա համակարգումը եւ արդիւնքների գնահատումը:

Որպէս պետական կառավարման մարմին, Նախարարութիւնը իրականացնում է Հայաստանի Հանրապետութիւն-Սփիւռք գործակցութեան զարգացման պետական քաղաքականութիւնը եւ նպաստում Հայրենիք-Սփիւռք կապերի սերտացմանը, համակարգմանը եւ զարգացմանը:

Սփիւռքի Նախարարութեան ստեղծմամբ համահայկական մտածողութիւնը ներմուծուեց ՀՀ պետական կառավարման, հասարակական-մշակութային ոլորտներ: Նախարարութիւնը մշակում եւ կառավարութեանն է ներկայացնում Հայաստանի Հանրապետութիւն-Սփիւռք ծիրի մէջ բոլոր այն

հարցադրումները, որոնց լուծումը բխում է հայ ժողովրդի միասնության շահերից եւ նպաստում Մայր Հայրենիքի հետ Սփիւռքի բազմակողմանի համագործակցութեանը:

ՀՀ Սփիւռքի նախարարը պետական բազմափորձ գործիչ տիկին Հրանուշ Յակոբեանն է, որը Նախարարութեան թիմն առաջնորդում է **«Ճանաչել, վստահել, գործակցել»** բանաձեւով: Միայն միմեանց լաւ ճանաչելով է հնարաւոր աւելացնել վստահութիւնը, իսկ եթէ կայ վստահութիւն, ուրեմն հնարաւոր է եւ գործակցել, որը կարող է խորանալ եւ ընդլայնուել: Հենց սա է այն սկզբունքը, որով կազմակերպւում են Նախարարութեան աշխատանքները Սփիւռքի հետ:

Իր գոյութեան չորսուկէս տարիների ընթացքում լիարժէք ձեւաւորուել է մեր, աւելի ճիշտ կը լինի ասել, ձեր Նախարարութիւնը: Պետութեան ջանքերով հետզհետէ համալրուել եւ ամբողջացուել է Նախարարութեան մասնագիտական եւ նիւթաարհեստագիկական հիմքը: Միաժամանակ, սերտ կապեր են հաստատուել Սփիւռքում գործող համահայկական, մշակութային, կրթական, հոգեւոր եւ այլ կառոյցների հետ եւ սկիզբ է դրուել մի շարք հիմնարար համահայկական ծրագրերի իրագործման:

Այս իմաստով յատկանշական են քաջածանօթ ու հարազատ «Արի Տուն»<sup>1</sup>, «Իմ Հայաստան»<sup>2</sup>, «Մեր Մեծերը», «Սփիւռք Ամառային Դպրոց»<sup>3</sup> ծրագրերը:

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓԻՒՐԷ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԿԱՅ  
ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայրենիք-Սփիւռք գործակցութեան զարգացման գերակայ խնդիրներ են հռչակուել.-

Ա) Սփիւռքում հայապահպանութեանը աջակցութիւնը.

Բ) Ազգային ներուժի համախմբումն ու արդիւնաւէտ կիրառումը.

Գ) Հայրենադարձութեանը խթանող ծրագրերի իրականացումը:

Բոլոր ժամանակներում Սփիւռքի համար գերխնդիրը եղել էւ մնում է հայապահպանութիւնը, այլ պետութիւնների

քաղաքական, տնտեսական, մշակութային ներգործության պայմաններում ազգային ինքնության պահպանումը:

Համաշխարհայինացման եւ աշխարհաքաղաքական նոր զարգացումների պայմաններում մեծացել է ուժացման վտանգը հայկական սփիւռքում. փակում են կրթօջախներ, անելանում են խառն ամուսնությունները, մոռացութեան է մատնում հայապահպանութեան ամենագորաւոր կոուանը՝ մայրենի լեզուն, երիտասարդութեան որոշ մասը օտարանում, հեռանում է համայնքային կեանքից, ազգային արժեհամակարգից: Վտանգում է դարեր շարունակ հայ ժողովրդի կողմից ստեղծուած պատմամշակութային ժառանգութիւնը:

ԻԱ. դարում աշխարհասփիւռ հայ ժողովրդի դէմ նոր մարտահրաւերներ են ծառայած, որոնք հնարաւոր է յաղթահարել միմիայն միասնաբար, արդիւնաւէտ գործելով, մէկտեղելով հայկական բոլոր կառոյցների ու անհատների կարողութիւնները, համախմբուելով Հայրենիքի շուրջ՝ լուծելու արդի ժամանակաշրջանի համազգային առաջնահերթ հետեւեալ խնդիրները.-

1. Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի զարգացման, ամրապնդման ու անվտանգութեան ապահովումը.
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հիմնախնդրի խաղաղ կարգաւորումը.
3. Հայոց դէմ կատարուած Յեղասպանութեան միջազգային ճանաչումը, դատապարտումը եւ հետեւանքների վերացումը.
4. Հայապահպանութիւնը Սփիւռքում եւ պայքար՝ ուժացման դէմ.
5. Հայ եկեղեցու շուրջ համախմբումը:

ՍՓԻԻՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԿԱՅ ԾՐԱԳՐԵՐԸ  
Ա. ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ

Փորձեմ ներկայացնել Հայաստանի Հանրապետութիւն-Սփիւռք գործակցութեան առաջնահերթութիւններից հանդիսացող համահայկական միասնական տեղեկատուական դաշտի ձեւաւորմանն ու զարգացմանն ուղղուած, արդի հեռահաղորդակցութեան եւ համացանցային միջոցների

կիրառամար Սփիւռքի Նախարարութեան կողմից իրականացուող ծրագրերը:

Տեղեկատուութեան փոխանակման, համահայկական նշանակութեան ծրագրերի եւ Հայաստանի Հանրապետութիւն-Սփիւռք գործակցութեան զարգացման լուսաբանման նպատակով սերտ կապեր են հաստատուել սփիւռքեան բոլոր լրատուական կառոյցների հետ: 2010ին Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում եւ 2012ին Երեւանում կայացան Լրագրողների 5րդ եւ 6րդ Համահայկական Համաժողովները:

Համաժողովների աշխատանքները առցանց ուղիղ միացմամբ հեռարձակուեցին ԱՄՆ եւ Կանադա: Սրան զուգահեռ տեղեկատուական արհեստագիտական միջոցների կիրառմամբ առցանց միացումներ եղան ԱՄՆի, Լիբանանի, Սիրիայի եւ Քուէթի հետ՝ հնարաւորութիւն ընձեռելով աշխատանքներին միանալ բոլոր նրանց, ովքեր ինչ-ինչ պատճառներով չէին կարողացել ժամանել Հայաստանի Հանրապետութիւն:

Սկսած 2011ից կազմակերպւում են երիտասարդ լրագրողների վերապատրաստման դասընթացները: Նոյն այս հիմքի վրայ, եւ հաշուի առնելով Սփիւռքի պահանջը, 2012ին ստեղծուեց նաեւ «Սփիւռք Ամառային Դպրոց»ը: Երկու դէպքում էլ կազմակերպւում են առցանց դասախօսութիւններ՝ մասնակիցներն ունկնդրում են աշխարհի տարբեր երկրներում ճանաչուած հայ մասնագէտների խօսքը: Նախարարութեան հրաւիրած համաժողովներին, գիտաժողովների ընթացքում, նրանց՝ ովքեր հնարաւորութիւն չեն ունենում տարբեր պատճառներով ժամանել Հայաստանի Հանրապետութիւն, ուղիղ միացումներով հնարաւորութիւն ենք ընձեռում մասնակցելու գիտաժողովների աշխատանքներին: Համացանցի հնարաւորութիւնների օգտագործմամբ արդէն, յաջողութեամբ կազմակերպւում են նաեւ Լրագրողների Համահայկական Ընկերակցութեան համակարգող մարմնի պարբերաբար հրաւիրուող նիստերը:

#### Բ. ՏԵՍԱԺՈՂՈՎՆԵՐ

Բարձր արհեստագիտական միջոցները եւ համացանցը օգնում են Սփիւռքի Նախարարութեան ծրագրերը տեղայնացնելու, միքանի թոպէում բազմաթիւ կազմակերպութիւնների հետ կապուելու, տեսաժողովներ կազմակերպելու եւ տեղեկատուութիւն տրամադրելու համար:

Համայնքի խնդիրներին անմիջական շփման միջոցով ծանօթանալու նպատակով Նախարարութիւնը, օգտագործելով բարձր արհեստագիտական միջոցները, պարբերաբար տարբեր երկրների հայ համայնքների ամենատարբեր կառոյցների, դպրոցների եւ համայնքի ներկայացուցիչների հետ իրականացնում է տարբեր թեմաներով հեռավար տեսաժողովներ, խորհրդակցութիւններ: Նախարարութեան չորս տարիների ընթացքում կազմակերպուել են աւելի քան 70 տեսաժողով, այսինքն՝ տարեկան ոչ-պակաս քան 15 նման ձեռնարկ: Տեսաժողովների աշխարհագրութիւնը չափազանց լայն է՝ ընդգրկելով բոլոր մայրցամաքներն ու երկրները, որտեղ առկայ է թէկուզ փոքրաթիւ հայ համայնք:

#### Գ. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔ

Գործում է Նախարարութեան պաշտօնական կայքէջը՝ [www.mindiaspora.am](http://www.mindiaspora.am), որտեղ լուսաբանում են Նախարարութեան առօրեան, պաշտօնական նիւթերը:

Նախարարութեան հիմնադրման առաջին իսկ ամիսներից ստեղծուեց Նախարարութեան պաշտօնական կայքէջը, որն աշխարհասփիւռ հայութեանը հնարաւորութիւն է ընձեռում ծանօթանալ Սփիւռքի Նախարարութեան, Սփիւռքի նախարարի գործունէութեանը, գործուղումների հաշուետուութիւններին ու դրանցից բխող առաջարկութիւններին: Նոյնպէս, կարելի է ծանօթանալ Սփիւռքի նախարարին կից ատեանի նիստերին, Նախարարութեան անցուղարձին: Նախարարութեան պաշտօնական կայքէջը պարբերաբար թարմացում, արդիականացում է: Սրա միջոցով իրաքանչիւրը կարող է ծանօթանալ Նախարարութեան կառուցուածքին,

կանոնադրութեանը են.: Կայքէջում սփիւոքահայերի համար նախատեսուած են.- «երկքաղաքացիութիւն, իրաւական ակտեր», «յաճախ տրուող հարցեր», «հեռախօսազանգ՝ նախարարութիւն», «օգնութիւն՝ աշխատանք փնտռողին» եւ այլ բաժիններ: Գործում է թէ՛ գիծը, պարբերաբար աւելանում են այցելութիւնների թիւն ու աշխարհագրութիւնը:

Դ. ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ, ՖԻԼՄԱՇԱՐԵՐ, ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿՆԵՐ

Պարբերաբար պատրաստում եւ հեռարձակում են Հայաստանի Հանրապետութիւն-Սփիւոք գործակցութեան վերաբերեալ ֆիլմաշարեր, տեսահոլովակներ եւ հեռուստահաղորդումներ:

Աշխատանքներ են տարւում տարբեր հեռուստաընկերութիւնների հետ, դրանք դիտելով որպէս Հայաստանի Հանրապետութիւնից տեղեկատուութիւն սփռելու, Նախարարութեան կատարած աշխատանքը, ծրագրերը սփիւոքահայերին հասանելի դարձնելու ամենաարդիւնատէր միջոց:

Իր գործունէութեան ընթացքում Սփիւոքի Նախարարութիւնը Հայաստանի Հանրապետութիւն-Սփիւոք գործակցութեան տարբեր ոլորտներում մեծապէս կարեւորել է տարբեր համայնքների մասին պատմող հեռուստաֆիլմերի ստեղծման, հեռուստահաղորդումների նախագծերի իրականացման, տեղեկատուական ֆիլմերի, հոլովակների պատրաստման, պատուիրման աշխատանքները: Սրանցից հանրութեանն առաւել յայտնի են «Իմ Հայաստան» (հայկական սփիւոքի դերն անկախ Հայաստանի Հանրապետութեան 20 տարիների պետականաստեղծ գործընթացում), «ՀՀ Սփիւոքի Նախարարութիւնը Չորս Տարեկան Է», «Տեսնեմ Անին», «Ախալցխա», Ֆիլմաշար Ջաւախքի հինգ գիւղերի մասին՝ Կարծախ, Փոկա, Դամալա, Գանձա, Սաթխա, «Արի Տուն» ծրագրի բոլոր տարիների (2009-2013) գործունէութիւնը ներկայացնող ֆիլմերը:

Հեռուստածրագրերից յիշատակման արժանի են «Սփիւոքի

Ժամ», «Մերոնք», «Հայլուր Սփիւռք», «Հայկական Պարեր», «ՀՀ Ներգաղթելու 10 Խնդիրները Եւ Դրանց Յաղթահարման Ուղիները», «Մեր Բարերարները», «Մեր Մեծերը», «Բարի Գիշեր Հայեր»ը:

Քիչ չեն նաեւ տեղեկատուական ֆիլմերը. Պոլսի «Դալար» երգի-պարի խմբի ցուցադրութեամբ՝ «Հայկական Տարագներ» ֆիլմը, Հայ Լրագրողների Համահայկական Համաժողովներ, «Սփիւռքի Կազմակերպութիւնների Ղեկավարների Եւ Ներկայացուցիչների Համահայկական Համաժողով», «Մայրենի Լեզուի Օր», «Մեր Մեծերը», «Հայկական Առեւտրաարդիւնաբերական Պալատների Եւ Գործարարների Միութիւնների Ներկայացուցիչների Խորհրդաժողով», «Սինգապուր», «Ոսկէ Շերեփ» եւն.:

Ե. «ՀԱՅԵՐԷՆԻ ԵՒ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓՈԽԱՐԿԻՉ ԾՐԱԳԻՐ

Շարունակում են աշխատանքները «Արեւելահայերէնից Արեւմտահայերէն Եւ Հակառակը» առցանց փոխարկիչ ծրագրի բառապաշարի մեծացման եւ *ալգորիթմական* հիմքի կատարելագործման ուղղութեամբ: Կենտրոնն ստեղծուել է հայկական համայնքներում արեւմտահայերէնով եւ արեւելահայերէնով խօսող սփիւռքեան երկու հատուածների հաղորդակցութիւնը աւելի դիւրին դարձնելու նպատակով:

Կենտրոնի նպատակն է նպաստել հայոց լեզուի պահպանմանը եւ նրա ուսուցման գործընթացին (յատկապէս Սփիւռքում), հայերէնով մատչելի դարձնել օտարալեզու տեղեկատուութիւնը, օժանդակել հայերէնով վարուող մասնագիտական ուսուցման գործընթացին:

Կատարում են արեւելահայերէն-արեւմտահայերէն-անգլերէնի միջեւ թարգմանութիւններ, հայերէն նախադասութիւնների քերականական վերլուծում, հայերէն գրութիւնների ուղղագրական սխալների սրբագրում, հայագիտական նիւթերի տրամադրում եւ նման բովանդակութիւն ունեցող այլ կայքերի կապակցում: Ծրագիրը



նպաստում է օգտուողի հայերենի բառապաշարի հարստացմանը:

Գործում է բազմալեզու թարգմանչական բացատրական բառարան, կայ ներդրուած այբբենարան, հայերեն հանրագիտարան, ուսումնական *պորտալ*, բուհերի ուսանողների համար, համացանց միջավայրում աշխատող խմբագրիչ:

Այժմ բառարանում ներառուած են 93,000 արեւելահայերեն, 90,000 արեւմտահայերեն, 10,000 գրաբար, 113,000 անգլերեն, 85,000 ռուսերեն, 8500 լատիներեն, 45,000 թուրքերեն եւ 30,000 քրդերեն բառեր:

## Ձ. ՀԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

2009ից Սփիւռքի Նախարարութիւնում, ապա 2011 Մայիսից առանձին աշխատակազմով Սփիւռքի Նախարարութեան անմիջական հովանու ներքոյ թողարկուում է «Հայերն Այսօր» ամենօրեայ, էլեկտրոնային եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) պարբերականը, որը լուսաբանում է Սփիւռքի Նախարարութեան ծրագրերը, հայկական համայնքներում կատարուող կրթամշակութային, հասարակական, տնտեսական եւ այլ իրադարձութիւնները: Թերթը ներկայացնում է Սփիւռքում ապրող, ինչպէս նաեւ հայրենադարձ սփիւռքահայերի կեանքն ու գործունէութիւնը, յաջողութիւններն ու նրանց կողմից բարձրացուած հարցերն ու խնդիրները, հայկական կառոյցների գործունէութիւնը, աշխարհի տարբեր երկրներում բնակուող, տարբեր բնագաւառներում ճանաչուած, յաջողութիւնների հասած հայերի մասին յօդուածներ, հարցազրոյցներ, ճանաչողական նիւթեր եւն.:

էլեկտրոնային օրաթերթի հիմնական նպատակն է նպաստել.-

- ✓ Հայաստանի Հանրապետութիւն-Սփիւռք գործակցութեան զարգացմանը.
- ✓ Տեղեկատուական ընդհանուր միջավայրի ձեւաւորմանը.
- ✓ Աշխարհի տարբեր երկրներում լոյս տեսնող հայկական

թերթերի եւ էլեկտրոնային լրատուամիջոցների միջեւ տեղեկատուութեան փոխանակմանը.

✓ Համագործակցութեան նոր հնարաւորութիւնների ստեղծմանը:

Թերթը անցած երկու տարուայ իր գործունէութեան ընթացքում հիմնականում կատարում է իր առջեւ դրուած խնդիրները՝ արձանագրելով ակնառու առաջընթաց՝ տեղեկատուութեան *օպերատիւ*ութիւն, սեփական նիւթերի քանակային ու որակական ընդգծուած աճ եւ բազմազանութիւն: Եռանդուն համագործակցութիւն կայ տեղական եւ սփիւռքեան լրատուամիջոցների, ինչպէս նաեւ Սփիւռքի Նախարարութեան ստորաբաժանումների հետ: Հնարաւորինս արագ արձագանգում է սփիւռքահայ համայնքներում տեղի ունեցող կարեւոր իրադարձութիւններին: Սփիւռքի Նախարարութեան նախաձեռնութեամբ կամ անմիջական աջակցութեամբ տեղի ունեցող միջոցառումները *օպերատիւ* լուսաբանում են, սփիւռքահայ ազգային, հասարակական, մշակութային գործիչների դիմանկարներ են մատուցում, Հայաստանի Հանրապետութիւն այցելած Սփիւռքի համայնքային կառոյցների ղեկավարների եւ ներկայացուցիչների հետ մշտական հարցազրոյցներ են կայացում, իսկ վերջին շրջանում՝ նաեւ համացանցային հեռահարցազրոյցներ են.: Այս ամէնը նպաստել է պարբերականի ընթերցողների յաճախումների աճին եւ նրա աստիճանական կայացմանը համահայկական լրատուական դաշտում (անցած մէկ տարում օրական յաճախումների միջին ցուցանիշն է շուրջ 750 ընթերցող՝ նախկին (մինչեւ 2011 Մայիսը) 40-50ի դիմաց):

Անցած երկու տարում էլ-թերթը տպագրել է շուրջ 6600 լրատուական նիւթ (ամսական 275 միաւոր), աւելի քան 780 յօդուած, ակնարկ, վերլուծական նիւթեր (ամսական շուրջ 33 միաւոր), 490 հարցազրոյց (ամսական շուրջ 22 միաւոր), գետեղել է 44 նկարագիրք (միջինը 30-40 լուսանկարներով), 60 տեսանիւթ:

Վերոյիշեալ նիւթերի միջոցով պարբերաբար լուսաբանուել են Սփիւռքի Նախարարութեան բազմաթիւ եւ բազմաբովանդակ ծրագրերն ու միջոցառումները, զանազան միջազգային համաժողովներ, գիտաժողովներ, դասընթացներ, Նախարարութեան կազմակերպած մրցանակաբաշխութիւններն ու մրցոյթները, Հայաստանի Հանրապետութիւնում սփիւռքահայ համայնքների օրերին նուիրուած եւ այլ մեծարման միջոցառումներ, Նախարարութեան միջոցներով եւ աջակցութեամբ հրատարակուած գրքերի շնորհանդէսներ են.:

Արդէն շուրջ մէկ տարի է, ինչ արեւմտահայերէնի մասնագէտի ընդգրկմամբ կայքի դասական ուղղագրութեան բաժնում նիւթերի գերակշիռ մասը ներկայացում է արեւմտահայերէն փոխադրութեամբ, ինչը, ըստ էութեան, կայքը դարձրել է քառալեզու:

Ներկայ պահին աւարտուել են կայքի ձեւաչափի արդիականացման աշխատանքները՝ որոշակի արհեստագիտական ծրագրային բարեփոխումների տեսքով, եւ շատ շուտով լիովին հնարաւոր է իրականացնել ծրագրուած մի շարք նպատակային գաղափարներ եւ նոր խորագրեր, ինչի արդիւնքում կայքը այսուհետ իր ընթերցողին կը ներկայանայ առաւել հարուստ բովանդակութեամբ, աւելի գրաւիչ, աշխուժ ու հետաքրքիր կերպի մէջ:

#### *ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ*

- Շարունակուում է Սփիւռքի մի շարք լրատուամիջոցների եւ համայնքային կառոյցների հետ կայքի գործակցութիւնը՝ տեղեկատուութեան փոխանակման միջոցով, ինչը անընդհատ ընդլայնելու եւ խորացնելու կարիք ունի: Յատուկ «Հայերն Այսօր»ի համար Սփիւռքի համայնքներից եւ թղթակիցներից ստացուած նիւթերը այսօր կազմում են ընդհանուր լրատուութեան շուրջ 5-6 տոկոսը, որը չափազանց քիչ է համահայկական արժէքներ քարոզող մի կայքի համար:

- Կայքի յետագայ գործունէութեան կարելոր ձեռքբերումներից կարող է լինել աշխատակիցների անմիջական համացանցային կապը Սփիւռքի համայնքային

կառոյցների ղեկավարների, համայնքների անուանի մարդկանց հետ: Նրանց հետ համացանցային հարցազրոյցները՝ այս կամ այն իրադարձութեան առիթով կը հարստացնեն կայքի էջերը անմիջապէս համայնքներից ստացուած «կենդանի խօսքով», ինչը ինքնրստինքեան կը մեծացնի յաճախումների թիւը: Այս առումով կայքը լուրջ ակնկալիքներ ունի համայնքային կառոյցների ղեկավարներից եւ համայնքի մտաւորական անձանցից, ովքեր, ցանկութեան պարագայում, կարող են անմիջական կապի մէջ լինել «Հայերն Այսօր»ի հետ՝ կազմակերպելով պարբերականին թղթակցելու շնորհակալ գործը:

#### Է. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ կառավարութեան 2011 Մարտի 10ի N 211-Ն որոշմամբ հաստատուել է Սփիւռքի Նախարարութեան «Տեղեկատուական Եւ Ուսուցողական Կայքերի Մշակման Եւ Սպասարկման Ծառայութիւններ» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում համացանցում առկայ հայերէն գրականութիւնը եւ հայալեզու ուսումնական եւ գիտահանրամատչելի նիւթերի բացը լրացնելու նպատակով մշակուել եւ գործարկուում է Սփիւռքի Նախարարութեան «Էլեկտրոնային Գրադարան» ծրագիրը ([www.lib.mindiaspora.am](http://www.lib.mindiaspora.am)): Անընդհատ համալրում է համահայկական հայալեզու գրադարանային շտեմարանը, որում հաշուի են առնուում հայերէն լեզուի երկու ուղղագրութիւնները: Համալրուող գրականութիւնը ներառում է ինչպէս հայ դասական, այնպէս էլ Հայաստանի Հանրապետութեան, Արցախի եւ Սփիւռքի ժամանակակից հեղինակների ստեղծագործութիւններ, աշխատութիւններ, ուսումնական նիւթեր: Բացի գրքերից տեղադրուում են տեսանիւթեր, ձայնագրութիւններ, բառարաններ, հանրագիտարաններ: Գրադարանում հիմնականում տեղակայուում են այն գրքերը, որոնց կարիքն ունեն հայկական դպրոցները:

Այսպէս, Էլեկտրոնային Գրադարանում արդէն իսկ տեղադրուել է Հայաստանի Հանրապետութիւն-Սփիւռք

գործակցութեանն առնչուող 15 անուն տեղեկատուութիւն եւ գրականութիւն, Լեռնային Ղարաբաղի մասին՝ 8, Ցեղասպանութեան խնդիրները վերհանող՝ 20, տնտեսական՝ 6, իրաւական՝ 5, գիտական՝ 213, վերլուծական՝ 43, մանկական՝ 40, դասագրքեր՝ 52, հոգեւոր՝ 10, գեղարուեստական՝ 320, պատմական՝ 200, մշակոյթի՝ 80՝ տեղեկատուական, տեղեկատուական-վերլուծական, ճանաչողական եւ այլ բնոյթի տեղեկատուութիւն եւ գրականութիւն:

Ցարդ գրադարանն ունեցել է շուրջ 10,000 այցելու՝ աշխարհի տարբեր երկրներից:

#### Ը. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԻՐՏՈՒԱԼ ԹԱՆԳԱՐԱՆ

Սփիւռքի Նախարարութեան «Տեղեկատուական Եւ Ուսուցողական Կայքերի Մշակման Եւ Սպասարկման Ծառայութիւններ» ծրագրի շրջանակներում ստեղծուել եւ գործում է «Հայկական Սփիւռքի Վիրտուալ Թանգարան» կայքը՝ [www.armdiasporamuseum.com](http://www.armdiasporamuseum.com), որի նպատակն է ներկայացնել հայկական սփիւռքի պատմութիւնը, ներկան եւ զարգացման հեռանկարները: Կայքում տեղադրուում են Սփիւռքի հայկական համայնքների, համահայկական կազմակերպութիւնների ու հոգեւոր կառոյցների, Հայաստանի Հանրապետութեան, Հայ Դատի վերաբերեալ նիւթեր, հայկական անձնանունների եւ ազգանունների բառարաններ, ներկայացուում են հայկական մշակութային ժառանգութիւնն ու նուաճումները, մեծանուն հայորդիների նպաստը համաշխարհային քաղաքակրթութեան: Ծրագիրը նպաստում է Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւռքի համայնքների փոխճանաչմանը, հայ ժողովրդի համախմբմանը, 'հայկական աշխարհի' ձեւաւորմանը:

«Հայկական Սփիւռքի Վիրտուալ Թանգարան» ծրագրի խնդիրներն են.-

- Հանրահռչակել հայ ժողովրդի պատմութիւնը, մշակութային ժառանգութիւնը եւ նուաճումները.

- Ձեւաւորել եւ արմատաւորել սփիւռքահայ երիտասարդների շրջանում հայ ազգային ինքնութեան, հայ ազգին պատկանելութեամբ հպարտանալու գիտակցութիւնը.

- Ճանաչելի դարձնել Հայաստանի Հանրապետութիւնը եւ Սփիւռքի հայ համայնքները միմեանց համար.

- Ամրապնդել Հայրենիք-Սփիւռք, Սփիւռք-Սփիւռք կապերը.

- Նպաստել Հայաստանի Հանրապետութեանը՝ որպէս հայ պետականութեան խորհրդանիշ եւ համայն հայութեան հայրենիք ընկալուելուն:

Թանգարանի «Հայկական Վիրտուալ Աշխարհ» բաժնի «Հայ Համայնքներ» ենթաբաժնում ներառուած են «Հայկական Սփիւռք» տարեգրքերի նիւթերը: Ըստ երկրների նշուած են համայնքների ձեւաւորման պատմութիւնը (հիմնականում), տեղեկատուութիւն՝ գործող հայկական կազմակերպութիւնների, դպրոցների եւ հոգեւոր կառոյցների վերաբերեալ տուեալներ: Որոշ երկրների դէպքում ներառուած է հայ համայնքների կողմից կազմակերպուած կամ կազմակերպուող միջոցառումների վերաբերեալ տեղեկատուութիւն: Նշուած են պատմամշակութային հաստատութիւնների, եկեղեցիների լուսանկարներ:

«Համահայկական Կազմակերպութիւններ» ենթաբաժնում ներառուած է տեղեկատուութիւն՝ կազմակերպութիւնների հիմնադրման, գործունէութեան եւ բարեգործական ծրագրերի վերաբերեալ, նրա մասնաճիւղերի մասին՝ ըստ երկրների: Նշուած են դրանց ղեկավարները կամ ղեկավար կազմի անդամների ցանկը, ինչպէս կապ հաստատել կազմակերպութիւնների հետ են.:

«Հոգեւոր Կառոյցներ» ենթաբաժնում ներառուած են հայկական հոգեւոր կառոյցների ցանկը եւ տեղեկատուութիւն՝ նրանց հիմնադրման եւ գործունէութեան վերաբերեալ: Առկայ են եկեղեցիների լուսանկարներ:

«Շտեմարան» բաժնում տեղեկատուութիւն կայ միայն «Ցուցասրահ» ենթաբաժնում, այն էլ միայն՝ *Ցաւի, Յիշողութեան Եւ Պայքարի Կոթողներ*<sup>4</sup> պատկերագիրքը:

*ԱՌԱՋԱԼԿՈՒԹՒՆՆԵՐ*

- Ժամանակակից սփիւոքահայ գրողների ստեղծագործությունների (այդ թւում՝ օտարալեզու) տեղադրում էլեկտրոնային Գրադարանում, ու տարածում: Հեղինակների լուսանկարներ, գրքեր, շնորհանդէսների մասին տեղեկություններ ու յղումներ.
- Սփիւոքի մշակութային իրադարձությունների մասին տեղեկությունների ու յղումների տեղադրում էլ-Գրադարանում (լուսանկարներ, նկարչական ցուցադրություններ, նկարագրքեր, տեսանիւթեր).
- Սփիւոքի հայկական հրատարակչությունների հետ կապերի հաստատում, նրանց հրատարակությունների մասին տեղեկությունների ու ազդագրերի տարածում էլ-Գրադարանում.
- Սփիւոքում իրականացուող հայագիտական ուսումնասիրությունների վերաբերեալ տեղեկություններ՝ հեղինակների եւ ստեղծագործությունների մասին, գրախօսականներ, գիտաժողովների նիւթեր՝ էլ-Գրադարանում հրապարակելու համար.
- Համայնքների պատմութեան վերաբերեալ նիւթերի (լուսանկարներ, գրքեր, մամուլի ուշագրաւ հրապարակումներ, յղումներ եւն.) տրամադրում՝ *վիրտուալ* թանգարանում եւ էլ-Գրադարանում հրապարակելու նպատակով.
- Հայագիտական կառոյցների հետ մշտական էլեկտրոնային կապի (*e-mail, facebook, twitter* եւն.) հաստատում՝ տեղեկությունների *օպերատիւ* փոխանակման համար.
- Հայոց Ցեղասպանութեան 100ամեակին ընդառաջ Սփիւոքի համայնքներից լուսանկարների, վկայությունների, ականատեսների պատմությունների հաւաքագրում՝ կայքում հրապարակելու համար.
- Սփիւոքի մամուլում (այդ թւում՝ էլեկտրոնային) հրապարակուող հայագիտական նիւթերի եւ ուսումնասիրությունների յղումների փոխանակում.

- Սփիւռքահայ երիտասարդ գրողների ստեղծագործությունների հրատարակում կայքում:

**Թ. ՏՈՒԵԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇՏԵՄԱՐԱՆ**

Հայկական սփիւռքի գիտական, կրթական, տնտեսական մշակութային եւ այլ ոլորտներում առկայ ներուժի հաշուառման եւ համախմբման նպատակով մշակուել եւ գործարկուել է ծրագիր՝ տուեալների համապարփակ էլեկտրոնային շտեմարան, որտեղ ամբարում են Սփիւռքի համահայկական եւ տարածաշրջանային կառոյցների, անհատների եւ տեղեկատուական աղբիւրների մասին լիարժէք տեղեկութիւններ ու տուեալներ: Նոյն ծրագրի շրջանակներում Սփիւռքի ներուժի յայտնաբերման, համախմբման նպատակով ստեղծուել են մասնագիտական համահայկական ընկերակցութիւններ եւ ցանցեր:

Հայաստանի Հանրապետութեան կողմից ձեռնարկուող պետական եւ հասարակական նախաձեռնութիւնների, համապետական եւ համահայկական նշանակութիւն ունեցող հարցերի վերաբերեալ քննարկումներին, միջոցառումներին եւ ծրագրերին Սփիւռքի կրթամշակութային գործիչների, գիտնականների, մասնագէտների մասնակցութեան ապահովում:

Շտեմարանի ծրագրի իրականացման նպատակով Սփիւռքի Նախարարութիւնը համագործակցել է ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի, ՀՀ գերատեսչութիւնների, մասնաւորապէս ՀՀ Մշակոյթի, Արտաքին Գործերի, Կրթութեան Եւ Գիտութեան, Էկոնոմիկայի, Սպորտի Եւ Երիտասարդութեան Հարցերի, Առողջապահութեան Նախարարութիւնների հետ:

Ներկայ պահին Նախարարութեան էլեկտրոնային շտեմարանում մուտքագրուած է 16,200 տուեալ:

Էլեկտրոնային Գրադարանի, Վիրտուալ Թանգարանի ինչպէս նաեւ Նախարարութեան էլեկտրոնային տուեալների պաշարը անհրաժեշտ տեղեկատուութեամբ համալրելու եւ



առաւել ամփոփ ու ընդգրկուն դարձնելու համար մենք անչափ զգում ենք Սփիւռքի համայնքների, կազմակերպութիւնների, կառոյցների եւ անհատների աջակցութեան կարիքը:

Ո՛վ, եթէ ոչ՝ հենց համայնքը եւ համայնքի լրատուամիջոցները կարող են ստոյգ եւ ամփոփ տեղեկատուութիւն ներկայացնել իրենց մասին, իրենց համայնքի կրթամշակութային արժէքների, համայնքի երեւելիների, ճանաչուած անհատների ու կազմակերպութիւնների մասին: Մենք պարբերաբար նամակներ ենք ուղարկում բոլոր հայ համայնքների կառոյցներին այս խնդրանքով, սակայն մինչ օրս արձագանգել են միայն բացառիկ դէպքերում, այն էլ փոքրածաւալ եւ թերի տեղեկատուութեամբ:

Յոյսով եմ այսուհետեւ սփիւռքեան կառոյցների մօտ մօտեցումն այս հարցի նկատմամբ կը փոխուի:

Որպէս վերջաբան ուզում եմ մէջբերել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի հետեւեալ խօսքերը. «Սփիւռքն ու Հայրենիքը պէտք է դառնան միմեանց շարունակութիւն: Սփիւռքը թէ՛ քաղաքականապէս, թէ՛ մշակութապէս, թէ՛ գիտական, առողջապահական ու մարզական առումներով պէտք է սնուի հայրենիքից եւ սնի հայրենիքը: Սա նշանակում է փոխադարձաբար լրացնել միմեանց: Թող Աստուած տայ մեզ իմաստութիւն՝ վերարժեւորելով ձեռք բերուածը, բազմապատկել ազգային ներուժը եւ նուաճել նոր բարձունքներ»:

#### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՒՆՆԵՐ

<sup>1</sup> Ծրագիրը սկիզբ առած է 2009ին:

<sup>2</sup> Ծրագիրը սկիզբ առած է 2012ին:

<sup>3</sup> Ծրագիրը ստեղծուած է 2012ին:

<sup>4</sup> *Ցաւի, Յիշողութեան Եւ Պայքարի Կոթողներ/Memorials of Sorrow, Remembrance and Struggle (Memorials in Remembrance of the Armenian Genocide Victims)*, Երեւան, 2010, Հրատ. ՀՀ Սփիւռքի Նախարարութեան Հրատ., Տպարան Տիգրան Մեծ:

---

THE INFORMATION TECHNOLOGY-RUN PROJECTS OF THE  
DIASPORA MINISTRY OF THE REPUBLIC OF ARMENIA  
(Summary)

Vaghinak Vardanian  
vardanyan.vaghinak@mail.ru

On October 1, 2008 the Ministry of Diaspora, headed by Mrs. Hranush Hagopian, was established in the Republic of Armenia. In his paper, Vaghinak Vardanian, a member of the administrative staff of the Ministry, details the founding of the Ministry, its formation and shaping, the projects it has carried out, the core objectives and future prospects of the Ministry.

Vardanian notes that the Ministry was established with the objective of developing cooperation between the Republic of Armenia and the Armenian Diaspora, strengthening the ties between the two entities and promoting the spiritual unity of the Armenian nation, as well as developing policies which enhance the growth of Armenian educational, scientific, cultural, economic, youth, and sports endeavors, and the coordination of such activities and their use for the dissemination of Armenian interests.

Vardanian argues that as a state governing body the Ministry implements the state policy of developing cooperation between the Republic of Armenia and the Diaspora and contributes to the strengthening, the coordination and development of the ties between the two. He further notes that the existence of the Diaspora Ministry has led to the incorporation of pan-Armenian thinking and perception in Armenia in both state governance and cultural fields as well as in the world Armenian space in general.

Vardanian highlights the fact that the Ministry is extensively using contemporary information technologies in disseminating all sorts of cultural materials pertaining to Armenian life, promoting Western Armenian language and translation facilities, and establishing virtual libraries of Armenian books and virtual history museum tours of different Armenian Diaspora communities, as well as producing documentaries, etc. The author also highlights a number of youth activity projects organized on a yearly basis to attract young Diaspora Armenians to the republic and acquaint them with the rich Armenian culture and history. Furthermore, he highlights the summer school sessions for Diaspora Armenian teachers, training sessions for media members, etc. and their impact on the participants. Vardanian brings to the limelight the Ministry e-journal *Hayern Aysor*, which covers all sorts of Armenian cultural events pertaining to the Diaspora.

Finally, Vardanian notes that a lot has been achieved, yet a lot still needs to be done, and he calls on Diaspora activists to pay more attention to the Ministry's IT communications network, to make more use of it and contribute to its further growth by providing materials of current events.